ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 13 » հուլիս 2023թ. No 3470 - Ա

ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 75-Ն հրամանի հավելված N 1-ի 35-րդ կետով, հավելված N 2-ի 3-րդ կետով, հիմք ընդունելով էթիկայի հանձնաժողովի անդամների մրցութային ընտրություն իրականացնող հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 11-ի՝ էթիկայի հանձնաժողովի անհատական կազմը ընտրելու մասին թիվ 4 որոշումը, Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման Հավելվածի Առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել էթիկայի հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Էթիկայի հանձնաժողովի անհատական կազմին՝ ղեկավարվել ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշմամբ և ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 75-Ն հրամանով:
3. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

ապահովել սույն հրամանի հրապարակումը Առողջապահության նախարարության պաշտոնական ինտերնետային կայքէջերում:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ